



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11
24335

£

Մ. ԳՐԵԽՈՎ

Ի Ն Չ Պ Ե Ս Հ Ա Վ Ա Ք Ե Լ
Փ Ա Յ Ա Վ Ճ Ա Ր Ն Ե Ր Ը

Քաղաքում. ԻՌԻՍՏԻՏՆԻՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

„ՀԱՅԿՈՊՈՒ“

ՅԵՐԵՎԱՆ

1925 թ.

1/3 JUL 2017

ԳՆԵՑՆԻՔ ՅԵՎ ՏԱՐԱԾԵՑՆԻՔ

ՀԱՅԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


(Լույս էն տեսնել)

1. Տիկամիսով. — Ինչպես անել, վոր կոտակերատիվի գործերը լավանան. — գունավոր շապիկով, 32 յերես, զինն և 20 կ.
2. Կոտակերատիվի տառջին բայերը. գունավոր շապիկով, յերես 40 — զինն և 30 կոպեկ:
3. Պ. Շուշան. — Գլուխացի, ուժեղացրու կոտակերացիան — 20 յերես. նկարագարդ շապիկով — զինն և 5 կոպեկ:
4. Զ. Ս. Մ. — Ինչպես պետք և յինի կոտակերատիվի գործակատարը — 22 յերես, նկարագարդ շապիկով — զինն և 8 կոպ.
5. Ինչպես պիտի նիմնել կոտակերատիվ խանութ — 24 յերես, զինն և 10 կոպեկ:
6. Պոմիսեով. — Ինչպես պետք և նաշիվ տա սպառողական ընկերության վարչությունը — 26 յերես, զինն և 15 կոպ.
7. Պ. Ֆուլան. — Կորչին չարչիները — 16 յերես, պատկերագարդ, զինն և 8 կոպեկ:
8. Շեկն. — Մորնակը — 26 յերես, 30 կոպեկ:
9. Կերմեցեով. — Կազմակերպիր ինքդ թեզ — 56 յերես, զինն և 35 կոպեկ:
10. Ոստովոկալա. — Կոտակերացիան ինչու՞ և նամար և պետք գլուխացուն. — զինն և 25 կոպեկ:
11. Գեներով. — Կազմակերպեցեր խանութային հանձնաժողովներ. — զինն և 20 կոպեկ:
12. Ռիկով. — Կոտակերացիայի մասին — 36 յերես — զինը 25 կոպեկ:
13. Ա. Վ. Մաեսովոկի. — «Խափանից» պիես 3 գործողությամը — 20 յերես, զինն և 15 կոպեկ:
14. Ս. Վով. — Վոջիների գեմ կովկուս միջոցը պիես 3 գործողությամը:
15. Գրեխով. — Ինչպես հավարել փայլավարները:
16. Գործակատարի կազմակառուցը:

Մ. ԳՐԵԽՈՎ

Ի Ն Չ Պ Ե Ս Հ Ա Վ Ա Ք Ե Լ Փ Ա Յ Ա Վ Ճ Ա Ր Ն Ե Ր Ը

Թարգման. ՌՈՒՍԵՐԵՆԻՑ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

„ՀԱՅԿՈՈՊԻ“

ՅԵՐԵՎԱՆ

1925 թ.

ԻՆՉՊԵՍ ՀԱՎԱԲԵԼ ՓԱՅՈՎՃԱՐՆԵՐԸ

1. ԻՆՉ Ե ՓԱՅՈՎՐԱՄԱԳԼՈՒԽԸ

Վորպեսզի սպառողական ընկերությունը կարողանա կատարել իր պարտականությունը, այսինքն յուր անդամների սպառման անհրաժեշտ ապրանքներ մատակարարի, նա, ամենից առաջ, պետք է յուր անդամներից փայավճարները գանձի. հակառակ դեպքում՝ նա չի կարող ապրանք գնել:

Փայտղրամագլխը, վոր կազմվում է անդամների վճարումներից (փայերից) ընկերության հիմնական վողնաշարն է, առանց վորի ընկերությունը աշխատել չի կարող:

Կոպերատիվի փայտղրամագլխի մեծ ու փոքր լինելուց է կախված նրա առևտրի չափը: Չնչին դրամագլուխ ունեցող սպառողական կոպերատիվը հազիվ հազ կարող է մի կերպ քարշ տալ իր կյանքը. նրա խանութում քիչ ապրանք կլինի, շատ անհրաժեշտ ապրանքներ բոլորովին կբացակայեն: Առհասարակ նման կոպերատիվը մի խղճալի կազմակերպություն կլինի.

Ապրանքները քիչ քանակությամբ առնելով, կոպերատիվը ստիպված է լինում ավել վճարել նրանց տեղափոխելու համար: Մայլը նույն գինն է վերցնում—կուգես 5 փուխ ապրանք բարձի, կուգես՝ 10: Մյուս վերա-



91-24335 գր

դիր վճարներն ել քիչ ապրանք առնելու դեպքում յուրաքանչյուր ֆունտին կամ փթին շատ ավելի են ընկնում: Կնշանակի՝ ապրանքը յեթե կոտպերատիվին թանգ ենըստել, ապա նա թանգ ել պետք ե ծախի: Այսպիսով՝ թե ապրանքն ե լինում քիչ, և թե յեղածն ել թանգ ե ծախվում:

Բայց գյուղական սպասողական ընկերությունն սպասողական անդամներին սպասման առարկաներ հայթայթելը չի միայն, այլ նաև անդամներից մթերքներ առնելը՝ հացահատիկ, միս, բամբակ, խազող և այլն:

Գյուղացին յերբեմն կարիքից ստիպված պատրաստ ե լինում իր քրտնքի պտուղը չնչին գնով վաճառելու: Պատահում ե, վոր գնող չի լինում բացի գյուղական կուլակներից:

Նրանք ել, ի հարկ ե, իրար մեջ համաձայնություն են գալիս և ամենաչնչին գինն են վճարում: Հարևան գյուղի շուկայում կամ քաղաքում ել նույն գրությունն ե լինում: Գնողները այն տեսակ գին են նշանակում, վոր կուլեա ծախիր, կուլեա ձրի սուր, հաշիվը մեկ ե:

Ահա հենց այդպիսի դեպքում կոտպերատիվը պետք ե ե ոգնություն գա յուր անդամներին, գյուղացիներին՝ մթերքները պետք ե գնի նշանակված միջին գնով: Կոտպերատիվը գյուղացուն պիտի ազատի այն գրությունից, յերբ նա ստիպված ե լինում իր ապրանքը կուլակի տված գնով ծախելու:

Բայց վորպեսզի կոտպերատիվը կարողանա գնել գյուղացիներին մթերքները, թեկուզ հենց քիչ քանակով, անհրաժեշտ ե, վոր կոտպերատիվն ունենա սեփական միջոցներ, այսինքն՝ փայտղրամազուխ:

Ծիշտ ե, յերբեմն գյուղացիներին մթերքները գնելու նպատակով միությունից, (Հայաստանում Հայկոտպից), ավանս կարելի յե ստանալ, բայց նախ՝ այդ միշտ հնարա-

վոր չի լինում, յերկրորդ՝ մինչև ավանս ստանալու համար դեռ ու դեն ընկնելը, ժամանակը կարող ե անցնել: Իսկ գլխավորն այն ե, վոր սկզբից պետք ե ապացուցել միությանը, թե կոտպերատիվը ընդունակություն և շնորք ունի գյուղատնտեսական մթերքներ գնելու: Անհրաժեշտ ե սկզբում սեփական միջոցներով գնել, թեկուզ քիչ ապրանք, և հետո միայն հույս գնել միությունից միջոցներ ստանալու վրա:

Ինչ վոր ասում ենք միությունից գյուղատնտեսական մթերքներ գնելու համար ավանս ստանալու մասին, այդ նույնը կարելի յե տեսլ նաև սոճաբարակ վարկ ստանալու մասին: Առանց վարկի անհնար ե առևտրական կամ տնտեսական վորեք գործ կատարել:

Ամեն գործի մեջ, պատահում ե, վոր յեղած միջոցները չեն բավականանում, թեկուզ այդ գործը մեծ ել չըլինի: Որինակ՝ առևտրի մեջ, յերբ ապրանքի մեծ պահանջ ե լինում և անհրաժեշտ ե լինում մեծ քանակություն մթերք գնելու, արդյունաբերություն մեջ՝ յերբ պետք ե լինում մեծ քանակություն մթերք հում նյութեր գնել և այլն:

Նման դեպքերում՝ ոգտվելով վարկից, վարկ ստացող ձեռնարկությունները վարկ կարող են տալ ուրիշ ձեռնարկությունների — յեթե ժամանակավորապես ավելորդ միջոցներ ունեն, վորոնք չեն գործադրվում:

Այդտեղից առաջանում ե գանազան տնտեսությունների մեջ կատարվող վարկային շրջանառությունը:

Բայց վարկ ստանալու համար, պետք ե վարկը վերագարձնելու ընդունակ լինել: Վարկ ցանկացող կոտպերատիվը պետք ե ապացուցի, թե ինքը ընդունակ ե ժամանակին վերագարձնելու վերցրած փողերը, թե ինքն ունի իր սեփական կապիտալը, վորով վարկը կարող ե ապահովել:

Կը նշանակի՝ յեթե կոտպերատիվն ուզում ե ոգտվել

վարկով, նա պետք է ունենա իր սեփական փայա-
գրամագրությունը:

Առհասարակ սպառողական կոոպերատիվը չի կարող
վոչ իր գոյութիւնը տանելի կերպով պահպանել, վոչ ել
մանավանդ անել ու զարգանալ, յետեւ բավարար չափով
փայադրամագրութիւն չունենա:

Ներկայումս շատ ու շատ սպառողական ընկերու-
թյուններ վատ վիճակի մեջ են և վոչ միայն չեն մեծա-
ցնում իրենց առևտուրը, այլ հազիվ հազ կարողանում
են պահպանել այն գրութիւնը, վորին հասել են: Իսկ
յերբ մի գործ առաջ չի գնում, նա հետագիւմում է:

Այգպիսի կոոպերատիվները պարտք են ձեռք ձգում
վորակից վոր հաջողվում է՝ և առանց յերկար մտա-
ծելու, թե վորակից են վերադարձնելու այդ պարտքերը:
Նրանք մտածում են, թե «մի կերպ կտանք . . . ժամա-
նակը ցույց կտա» և այլն:

Շատ հաճախ ժամանակը ցույց է տալիս, վոր վճա-
րելու փող չի լինում, մուրհակները մեկ, յերկու, յերեք
անգամ բողոքի լեն գնում և վարկ ավոյ հիմնարկները
դադարում են կոոպերատիվին վարկ տալուց: Կոոպերա-
տիվը գրկվում է վարկ ստանալու ընդունակութիւնից և
սեփական միջոցներ չունենալով ու առանց վարկի մնալով
թուլանում է:

Դրանից վնասվում են վոչ միայն իրենք կոոպերա-
տիվները, այլ նաև նրանք, ավքեր նրանց պարտք են տվել.
պարտքը հետ չստանալով, վարկ ավոյներն ել իրենց
պարտքերը ժամանակին չեն կարողանում վճարել, նը-
րանց վարկավորման ընդունակութիւնը նույնպես պա-
կասում է:

Այգպիսով աղքատ, սեփական միջոցներից զուրկ կո-
ոպերատիվները այս ու այն կողմն են ընկնում, Հայկո-
ոպի և պետական հիմնարկների շեմքերը մաշում են՝

վարկ ստանալու համար, բայց կամ ամենեկին չեն ստան-
նում, կամ մի չնչին մասն են ստանում:

Յեվ դա հասկանալի չէ: Սպառողական ընկերու-
թյուններին ամենից մտաք նրանց միութիւնն է. բայց
չե վոր միութիւնն ել հիմնական միջոցները ստանում է
սպառողական ընկերութիւններից՝ նրանցից փայավճար-
ներ գանձելով:

Սպառողական ընկերութիւնը վորքան մեծ գրամա-
գրութիւն ունենա, այնքան նա մեծ փայ կմտցնի: Իր հերթին,
կոոպերատիվ միութիւնը վորքան մեծ կապիտալ ունե-
նա, այնքան ավել մեծ վարկով կողավի ինքը և այնքան
ավելի շատ վարկ բաց կթողնի նա իր անդամներին, սպա-
ռողական ընկերութիւններին:

Թույլ, գրամագրութիւն չունեցող սպառողական ընկերու-
թյունները չեն կարող ստեղծել աեղական ուժեղ միութ-
թյուն, վոր կարողանար իր անդամներին հարկավոր
չափով վարկավորել: Իրենց հերթին սպառողական ընկե-
րութիւններին աեղական միութիւններն ել, ուժեղ հե-
նարան չունենալով, չեն կարող կենտրոնական միութիւն
(Ցենտրատիւն) լայն գործունեութիւնն ապաստել և այդ
պատճառով ել Ցենտրատիւնից հարկավոր չափով վարկ
ստանալու հույս ունենալ չեն կարող:

ԿՈՈՊԵՐԱՏՈՐ, ՅԻՇԻՐ, ՓԱՅԱԴՐԱՄԱԳՂՈՒՄԸ ԿՈՈ-
ՊԵՐԱՏԻՎ, ՏԵՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Ե

2. ԻՆՉ Ե ՊԵՏԲ ՓԱՅԱՎՃԱՐՆԵՐԸ ՀԱՎԱԲԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Այսպիսով ուրեմն, ամենից առաջ՝ պետք է հավա-
քել անդամների փայավճարները. Գործի համար միջոցներ
պետք է փնտոել վոչ թե զուրքը, այլ հենց կոոպերատիվ
ներսում:

Իսկ ինչ է պետք դրա համար: Ամենից առաջ՝ հա-
վատ դնալի կուպերացիան:

Յերբեմն ընկերութեան ղեկավարները հենց սկզբից կասկած են հայտնում գործի հաջողութեան մասին: Նը-
րանք ասում են.

«Հեշտ է ասել, թե փայտավճարները պետք է հավա-
քել, բայց սեմից վերցնես: Գյուղացիները մեծ մասը
ազգաս է և չի կարող առանց իր անտեսութեանը վնասե-
լու կորել նրանից 5 կամ 3 ուղբի: Քիչ թե շատ ունե-
վոր գյուղացիները այնքան ել չեն սիրում կոպերատի-
վից առուստը անելը—գնումները կատարում են մեծ
բանակութեամբ մտախի շուկայից: Մնացած գյուղացի-
ներն ել գեպի կոպերատիվն անտարբեր են: Յեթե ապրանքը
շատ եժան է լինում, իսկույն առնում են, յեթե գները
նույն իսկ հավասար են լինում մասնավոր շուկայի գնե-
րի հետ, այդ գեպում ել ավելի շատ շուկայից են առ-
նում, քան կոոպերատիվից: Իսկ կոոպերատիվի համար, թե-
կուզ մի չնչին գոհարերութուն անելու շատ քչերը կհա-
մաձայնին»: Այդպես են ասում վախկոտ և գեպի գործը
հավատ չունեցող կոոպերատորները:

Այդ բոլոր ատարելութուններից կարեւորը միայն
վերջինն է, այնքան այն, վոր գյուղացիութեան մեծամաս-
նութունը, գյուղացիական մաստան գեպի կոոպերատիվը
շատ անտարբեր է: Հենց այդ շարիքի առաջը պետք է
առնել:

Հարուստներին մի կողմ պետք է թողնել—նրանք
կոոպերատիվի բարեկամներ չեն կարող լինել: Կոոպերա-
ցիան միշտ ել ապրել է ու ապրում է չքավորների ու
միջակների շնորհիվ:

Ինչ վերաբերվում է ընդհանուր չքավորութեան, դա
սխալ է: Գյուղացիական մաստանների մեծ մասը միջակ է
և փայտավճարները մտցնելու միջոցներ ունի:

Ամբողջ հարցը նրանումն է, թե ինչպես հաղթահարել
գյուղացիների անտարբերութունը գեպի կոոպերատիվը.
ինչպես անել, վոր շարքային, միջակ գյուղացին իր փա-

յտավճար մտցնելը չընաշվի մի գոհողութուն, այլ մի հար-
կավոր ու ոգտակար գործ: Սրանումն է ամբողջ խն-
դիրը. իսկ փող փայտավճար մտցնելու համար, միշտ ել կը-
դանի նա:

Ամենից առաջ մեր ուշադրութունը դարձնենք սպա-
ռողական ընկերութեան վերին խավի՝ վարչութեան վրա:
Գյուղացին սպառողական ընկերութեան մեջ ամենից շատ
վարչութունն է տեսնում, ընկերութեան ղեկավարին: Իսկ
վարչութեան լակուվատ լինելուց կախված է նաև գյու-
ղացու վերաբերմունքը գեպի կոոպերատիվը:

Յեթե վարչութեան մեջ կան այնպիսի մարդիկ, վո-
րորոնց գյուղացիները հավատում և հարգում են, այն
գեպում գյուղացիները առանց վախենալու իրենց փա-
յտավճարները մտցնում են, վորոհետև մտածում են, վոր
նրանց մոտ փողը չի կորչի:

Յեվ ընդհակառակը՝ յեթե վարչութեան մեջ կան այնպի-
սիները, վորոնք անտարբեր են գեպի հասարակական գոր-
ծը, և մասնավոր յեթե նրանք յերբ և է աչքի են ընկել
վորպես հասարակական փողեր վաճառողներ, այն գեպում,
ս՛վ կընավատա իր փողերը այդպիսի վարչութեան, ս՛վ կը-
մտցնի իր փայլը:

Վարչութունը փայտավճարները հավաքելուց առաջ,
միջոցներ պիտի ձեռք առնի իր միջից հեռացնելու այն մար-
դկանց, վոր հասարակական գործի համար անպետք են և
նրանց տեղը պետք է ընտրի այնպիսի մարդկանց, վորոնք
արժանի են և բնակչութեան վստահութունը վայելում
են:

Յերբեք չի կարելի գրավել բնակչութեան սիրտն ու
զրպանը գեպի մի այնպիսի կոոպերատիվ, վորի խանու-
թը որբերով փակ է մնում, իսկ գործակատարը տանը չի
լինում, պտտում է իր անձնական գործերով:

Չկարծեք, թե գյուղացիները հավատ կընծայեն մի
գործի, յերբ տեսնեն, թե նրա վարչութունը կոոպերատի-

վի սուղ միջոցները ծախսում ե գանազան ոճանելիներ (գուլի, յուղեր) գնելու համար, իսկ գյուղացու աջքան անհրաժեշտ ապարքներ՝ ինչպիսին են աղը, նավթը, մեխը, թսկը և այլն, խանութում չկան:

Յերբեք չի ավելանա փայտ գրամազրուխը, յեթե ապրանքները կոպերատիվ խանութում ավելի թանկ են ծախվում, քան մասնավոր շուկայում:

Բնակչութունը շահազրգուել, նրա վատահոթյունը ձեռք բերել և փայտավճարները գանձել սովորաց շուտ կարելի է այն դեպքում, յերբ կոպերատիվ գործերը կանոնավոր են գնում: Պետք է ցույց տալ, վոր նույնիսկ համեմատարար քիչ միջոցներ ունենալու դեպքում ել, կոպերատիվը բավարար է աշխատում:

Այդ դեպքում և միայն այդ դեպքում, հիմք կլինի ստելու, վոր միջոցների ավելանալու ժամանակ գործը ավելի կլավանա, վոր նոր փայտավճարների հավաքելը գյուղացիներին սպասե բերելու:

Իսկ յեթե գործը վատ գրության մեջ է՝ սովեն մեկն ել կարող է ստել—յեթե յեղած գործը կարգին չեն կառավարում, մեկ է, ինչքան փող ուզում ես մացրու, բան չի գուրս գա:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՐԵՆՔ ՅԵԹԵ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՎ Ե ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ, ՆԱ ՓԱՅՄՎՃԱՐՆԵՐՆ ԵԼ ԿԱՐՈՂ Ե ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՎԱՔԵԼ:

3 ԻՆՉՊԵՍ ՀԱՎԱՔԵԼ ՓԱՅՄՎՃԱՆԵՐԸ

Փայտագրամազրուխը մեծացնելու յերկու միջոց կա: Ասենք թե կոպերատիվ անդամների թիվը մեծ է (կարող է պատահել, վոր կոպերատցիվ լինի ամբողջ շրջանի ազգաբնակչութունը), բայց փայտը փոքր—են, այդ դեպքում անտք է մեծացնել փայլը, հասցնելով մինչև 5 կամ 10 սուրբու: 10 սուրբուց բարձր ստայվմ չի կարելի փայ

նշանակել: Այդ չափը նշանակված է խորհրդային իշխանության դեկրետով, վորպեսզի, չքավոր բնակչութունը կարողանա կոպերատիվին անդամ լինել: Բայց չի արգելվում, վոր մեկը մի քանի փայ ունենա:

Այն կոպերատիվում, վորի անդամները քիչ են, պետք է ամենից առաջ միջոցներ ձեռք առնել նոր անդամներ գրավելու համար: Շատ սպառողական ընկերություններ անում են թե մեկը և թե մյուսը—թե փայն են բարձրացնում, թե նոր անդամներ են քաշում դեպի կոպերատիվը:

Նախ քան ժողով հրավիրելը և փայտագրամազրուխ ավելացման մասին հարցը դնելն, անհրաժեշտ է բնակչությունը նախապատրաստելու լայն աշխատանք տանել: Կոպերատիվի վարչության և վերաստուգիչ հանձնաժողովի անդամները պետք է շրջանը մի քանի մասերի բաժանեն (մեկ կամ մի քանի գյուղ) և ամեն մեկը իր մասում պետք է սզավի համայնքի ժողովներից և խոսի կոպերատցիայի աված սզուաների մասին, պետք է հասկացնի ազգաբնակչությանը, վոր կոպերատցիան անհրաժեշտ է ուժեղացնել՝ ժամանակին փայտավճարները մացնելով:

Թե ինչպես պետք է խոսել, վոր ժողովը համոզվի ու աջակցի կոպերատիվին, կախված է անզական պայմաններից ու ճառախոս ընկերոջ ընդունակություններից: Բայց զեկավարվելու համար կարելի է առաջարկել այս որինակելի ճառի ծրագիրը:

Ինչպիսի գառ կամ գեկուցում է պեճ անգամներին դեպի կոպերատցիան գրավելու համար:

ՄԲԱԳԻՐ.

1. Ամեն մի գործ հեշտ է առաջ գնում, յեթե այդ գործը կատարում են վոր թե առանձին մարդիկ, այլ խմբովին: Ապրանքը մեծաքանակ առնելիս, ավելի էժան է նստում, քան մաս-մաս առնելիս:

Սպառողական ընկերությունը հիմնվում է հենց նրա համար, վոր իր անդամներին սզուտ բերի, վորպեսզի

անդամների մացրած փողերով կարելի լինի մի անգամից շատ ապրանք գնել և բաժանել ընկերության անդամներին: Առանց փայլավճարների սպասողական ընկերությունն աշխատել չի կարող:

2. Սպառողական ընկերության աված մի ոգուան էլ այն է, վոր նրա առևարից, ստացած ամբողջ ոգուար մնում է ընկերությանը. նրանից ստեղծվում է հասարակական կապիտալ: վոր կարող է ծախսվել հասարակական կարիքների համար:

3. Մասնավոր առևարի մեջ ընդհակառակն է. ամբողջ ոգուար մնում է առևարականի գրպանում և զրանից հասարակությունը ոգուա չի ստանում—ավելի շուտ մնաս է ստանում: Վորքան ուժեղ է մասնավոր կապիտալիսար, այնքան նրա ազդեցությունը աշխատավոր ժողուրարզի վրա մեծ է:

Վերջի վերջո ամբողջ ազգաբնակչությունը կարող է նրա թաթերի մեջ ընկնել և քիչ չեն յեղել նման գեպրեր:

Իսկ հասարակական կապիտալը, բնդհակառակը՝ վոչ վորի չի կարող սարկացնել, վորովհետև նա հասարակության ձեռքին է հասարակությունն էլ վարվում է նրա հեա այնպես, ինչպես ուզում է:

4. Մասնավոր առևարականը, միայն այն ժամանակ է ստիպված լինում գինը քիչ իջեցնել, յերբ նրա կողքին կանգնած է կոոպերատիվը. իսկ հենց վոր կոոպերատիվ մրցում չկա, էլ առևարականին չես կարող գսպել. նա վերցնում է վորքան ուզում է՝ առանց խնայելու: Որինակ՝ յերբ կոոպերատիվում ժամանակավորապես մի տեսակ ապրանքից չի լինում, այն ժամանակ մասնավոր առևարականն այդ ապրանքների գները 2-3 անգամ թանգացնում է: Մասնավոր առևարականի նպատակը մեկ է—վորքան կարելի է շատ շահ ստանալ. կոոպերատիվի նպատակը ուրիշ է—ոգուա բերել ազգաբնակչությանը, շահի հեակից չընկնել,

ստացած փոքր ոգուար հասարակական կապիտալի վեր ածել:

5. Քաղաքներում, մեծ և լավ կազմակերպված սպասողական ընկերությունները հիմա արդեն բոլոր ապրանքները ավելի էժան են ծախում, քան մասնավոր առևարականը:

6. Այն, ինչ արված է քաղաքում, կարելի չէ անել նայի գյուղում. դրա համար պետք է զարգացնել, լայնացնել գյուղատնտեսական սպառողական ընկերությունները: Ինչքան շատ ապրանք տանվի ու ծախվի, այնքան էժան կնստի ապրանքը—ճանապարհի և ուրիշ առևարական վերադիր ծախսերը քիչ կլինեն: Կնշանակի ինչքան առևտուրը մեծ լինի, այնքան հնարավոր կլինի նաև ապրանքներն էժան ծախել: Իսկ առևտուրը մեծացնելու համար պետք է մեծացնել նաև նրա գրամագլուխը:

7. Առանց վարի չի կարելի վորև է քիչ թե շատ մեծ գործ սկսել. իսկ վարկ ստանալու համար, պետք է սեփական կապիտալ ունենալ: Պարաք այն ժամանակ են տալիս, յերբ գիտեն, վոր կարող են հեա ստանալ: Ինչքան սեփական գրամագլուխը մեծ լինի, այնքան շատ ու հեշա կտան վարկը:

8. Առանց սեփական գրամագլուխի ու վարկի չի կարելի զարգացնել գյուղատնտեսական մթերքներ գնելու գործը, չի կարելի պաշապանել գյուղատնտեսությունը մասնավոր գնողներից, վորոնք իջեցնում են գյուղատնտեսական մթերքների գները:

9. Կնշանակի՝ վորպեսզի կոոպերատիվի աշխատանքը գյուղացիներին մեծ ոգուա բերի, պետք է աջակցել կոոպերատիվին, մտցնել փախերը: Փայք չի կորչում, նա էլի տիրոջ սեփականությունն է և միևնույն է, թե այդ գրամբանկ է գրված: Յեթե ասում են, վոր կոոպերատիվ մտցրած փողը կորչում է՝ դա սխալ է: Փողը կորչում էր յերբ նրա արժեքը (կուրսը) ընկնում էր. իսկ կայուն

փողի ժամանակ, վոչ մի դեպք չի յեղել, վոր սպա-
ռոզական ընկերութիւնը այնքան վնասովի, վոր չկարո-
ղանա փայտավճարները հետ տալ տերերին: Իսկ սպառո-
զական ընկերութիւնների թիվը տասնյակ հազարների է
հասնում: Փայտավճարների համար պատասխանատու է
վարչութիւնը, վոր կազմած է անդամների ընտրած և
վստահութեան արժանի մարդկանցից, վորոնց մասին
չի կարելի ասել, թե նրանք գործը լավ չեն հասկանում,
կամ անազնիվ են ու կարող են դողանալ: Այդ վարչու-
թեան վրա հակում են թե վերստուգիչ հանձնաժողովը և
թե սպառողական ընկերութիւնների միութիւնը, Հայ-
կոստը:

10. Անգամ-փայտաբերը կոտլերատիվից ապրանք
գնելու արտոնութիւն են վայելում: Փայտավճարների
վրա տոկոսներ են գալիս, ինչպես բանկում: Անդամների
ընդհանուր ժողովի վորոշմամբ՝ կոտլերատիվից գնած
ապրանքի քանակի համեմատ, կարող են գնորդին շահ տալ:
Փայտավճարները կարելի չէ մտցնել մաս-մաս (ցույց տալ
ժամանակամիջոցը):

11. Միմիայն մեզ մոտ չի, վոր կոտլերացիան դար-
դացած է. մեզնից առաջ՝ կոտլերացիան յեղել է արտա-
տահմանում: Այնտեղ նույնպես նա հիմնովելիս է յեղել
բնակչութեան միջոցներից և վոչ միայն փայտավճարները
չեն կորել, այլ ընդհանրապէս՝ բնակչութեան նյութական
միջոցները կոտլերատիվի շնորհիվ աճել են, բնակչութեան
անտեսական գրութիւնը լավացել է: Գանիտալում հաւ-
կապես դարձացած է գյուղացիական, իսկ Անգլիայում՝
բանվորական կոտլերացիան:

12. Մեր կյանքի լավանալը յերկնքից չպիտի գա:
Միայն մենք մեր միջոցներով կարող յենք ոգնել մեզ:

Սրա համար շատ բան պետք չի. հարկավոր է մի
փոքր գումար, վոր մնում է չի կորչում: Փայտավճարները

համաձայն կանոնադրութեան, վորոշ դեպքերում նաև
վարչութեան վորոշմամբ վերագործվում են տերերին, յե-
թե փայտաբերը ցանկանում է հետ անել:

Ինչպես ասացինք՝ այս ճոտի ծրագիրն որինակելի է,
բայց նայած տեղին, պետք է լսողներին համոզել նրանց
հայանի որինակներով, համապատասխան փաստեր բերելով
տեղական կյանքից: Որինակները պետք է վերցնել մասնա-
վոր առևտրականի և բավական մեծ գրամագլուխ ու-
նեցող ու լավ աշխատող կոտլերատիվի կյանքից:

Ժողովներից ու մաստայական պրոպագանդայից
բացի պետք է անհատական պրոպագանդա ևս մղել, մաս-
նավոր մարդկանց մեջ — ժամանակը խոտակցութեան ժամա-
նակ:

Վարչութեան, վերստուգիչ հանձնաժողովի և կո-
տլերատիվի յուրաքանչյուր անդամը ունի միշտ ազգա-
կաններ, կամ լավ ծանօթ մարդիկ, վորոնք անգամ
չեն կոտլերատիվին: Նրանք կամ անտարբեր են դեպի
կոտլերացիան և տոնասարակ դեպի հոտարակական գոր-
ծերը, կամ թշնամարար են վերաբերվում: Այդ պատա-
հում է նույնիսկ լավ, հարգանքի արժանի մարդկանց հետ,
վորոնք չեն իմանում կոտլերացիայի նշանակութիւնը:
Ահա հենց այդ մարդկանց պետք է համոզել, վոր անդա-
մագրվեն կոտլերատիվին ու մտցնեն փայտավճարները: Շատ
անգամ մասնավոր գրույցի միջոցով հաջողվում է շատ
գնահատելի մարդկանց գրովել դեպի կոտլերացիան
և հետագայում այդ մարդիկ մեծ ոգուտ են բերում, թե
իրենք են իրենց փայտավճարները մտցնում և թե նոր փա-
յտաբեր են գրավում:

Պետք է ամենից առաջ դեպի սպասողական ընկերու-
թիւնները քաշել գյուղական բոլոր աշխատակիցներին ու
ընտրովի մարդկանց: Գործկոմի ծառայողներին, գյուղ-
խորհուրդների նախագահներին, ուսուցիչներին, բուժակ-
ներին և այլն:

Նրանք պետք է լինեն գյուղի ամենագիտակից առաջավոր մարդիկը, և այդ պատճառով ել պիտի մասնակցեն կոոպերացիային:

Անհամեմատ մեծ նշանակություն ունի փայտվճարները հավաքելու համար զեպի կոոպերացիան զբաղելը վոչ թե առանձին մարդկանց, այլ աշխատավորությունը մտա կանգնած կազմակերպություններին:

Որինակ՝ կոոպերացիան իր նպատակով շատ մտա է կանգնած փոխուղևություն ընկերություններին, չէ՞ վոր կոոպերացիան ինքը տնտեսական փոխադարձ ոգնություն տեսակներից մեկն է:

Վճարները հավաքելու գործում գյուղացիական փոխուղևություն կոմիտեյին անհրաժեշտ է առաջ քաշել: Նա կարող է վոչ միայն բարոյապես նպաստել կոոպերատիվին՝ բացատրելով գյուղացիներին կոոպերացիայի սղուտը, այլ և նյութական ոգնություն կարող է ցույց տալ — ոգնել փայտվճարները հավաքելուն. շատ զեպքում ել, իր միջոցներից կարող է մտցնել չքավոր անդամներին համար:

Մեր Խորհրդային Միության կենդանի ու շարունակական ընկ. Մ. Ի. Կալինինը իր ճառերում ուղղակի պահանջում էր փոխուղևություններից, վոր նրանք այդպիսի ոգնություն ցույց տան կոոպերացիային:

ԿՈՈՊԵՐԱՏՈՐ, ՀԻՇԻՐ՝ ՅԵԹԵ ԶՔԱՎՈՐԸ ՓՈՂ, ԶՈՒՆԻ ԻՐ ՓԱՅԸ ՄՏՅՆԵԼՈՒ, ՆՐԱ, ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԻՐ ԳՅՈՒՂՓՈԽՈՒԿԿՈՄԻՅ:

Անհրաժեշտ է փայտվճարները հավաքելիս զիմել նաև գյուղի կոմկուսակցության ու Լենինյան կոմյեբիտմիություն ընկերներին:

Նախ և առաջ նրանք իրենք կմտցնեն իրենց փայտվճարը, իրեն զխտակից և հասարակական կազմակերպություններ, յերկրորդ՝ նրանք իրենց գյուղի վրա ունեցած ազ-

11-243359

զեցությունը մեծ ոգնություն կարող են ցույց տալ կոոպերացիային:


Բանվորական ու քաղաքային կոոպերատիվներում, փայտվճարները հավաքելու գործում հսկայական դեր կարող են խաղալ բանվորները ու ծառայողները արհեստակցական միությունները: Կոոպերատիվի վարչությունը ամենից առաջ նրանց պետք է զիմի՝ ոգնություն խնդրելու համար:

Արհեստակցական կազմակերպությունները իրենց ժողովներում կարող են վորոշել, վոր ամբողջ կազմակերպությունը պետք է պարտադիր կերպով անդամագրվի կոոպերատիվին ու մտցնի փայտվճարը. այդպիսով միանգամից շատ մեծ գումար կհավաքվի:

Նույն գործին մեծ աջակցություն կարող են ցույց տալ նաև գործարանների և ուրիշ տնտեսական կազմակերպությունների վարչությունները: Չեռնարկության բանվորները ու ծառայողները համաձայնություն վարչությունը կարող է հանել յաբաքանչյուր անդամագրված աշխատակցի ուժերից մի փոքր գումար՝ փայտվճարը մտցնելու համար՝ և մտցնել կոոպերատիվ: Ուրիշ կերպ առաջ, վարչությունը ինքն իր վրա է վերցնում փայտվճարները հավաքելը:

Նույնիսկ ավելին: Չեռնարկության վարչությունը նախորոք կարող է մտցնել իր բանվորների և ծառայողների փայտվճարները, վորպեսզի հետո հետզհետե դուրս գա նրանց ուժերից: Շատ հիմնարկներ հենց այդպես ել անում են. միանգամից մի շատ խոշոր գումար են մտցնում կոոպերատիվ՝ բանվորների ու ծառայողների համար:

Նախկին ժամանակները կոոպերատորները վախենում էին տերերի այդպիսի ոգնությունից՝ վորովհետև մտածում էին, թե չլինի՝ անկերը այդ ոգնությունը իրենց «ախրական» ձեռքերի մեջ ունեն կոոպերատիվը՝



մայնելով նրա մեջ անգլիականից անդամները: Հիմա գրանից վախենալու կարիք չկա, մեր արեստները խորհրդային են և վոչ տերերն են նախկինը, վոչ ել բանվորները: Յեւ վոր գլխավորն է՝ Խորհրդային իշխանութիւնը ցարական կառավարութիւնն չի:

Շատ որինակներ կան, վորոնք ցույց են տայիս, թե հաճախ կուսակցական, արհեստակցական և այլ հասարակական կազմակերպութիւններն աջակցութիւն են ցույց տվել փայլավճարները հավաքելիս, դա շատ կարեւոր է: Կոոպերատիվի վարչութիւնները պետք է հիշեն, վոր կուսակցական, արհեստակցական ու հասարակական կազմակերպութիւնների հետ կապ չունենալով ու անշատ աշխատելով կոոպերատիվը կանոնավոր աշխատել չի կարող: Մասնավորապէս փայլավճարները հավաքելիս՝ կոոպերատիվները հաջողութիւն կունենան, յեթե ոգնութիւն կանչեն այդ կազմակերպութիւնները:

Հիշած բոլոր աշխատանքները կատարելուց հետո, վարչութիւնը նշանակում է ընդհանուր ժողով, վորտեղ և հարց և դնում ընկերութիւն անդամների փայլավճարներն ավելացնելու մասին: Այստեղ ել վորոշվում է փայերը մաս-մաս վճարելու և փայատերերի արտոնութիւնների հարցերը:

Փայլավճարները հավաքելու և նոր անդամներին ցուցակագրելու համար ժողովի ժամանակ պետք է ընդմիջում հայտարարել:

Առանձին գյուղերում փայլավճարները հավաքելու համար վարչութիւն յուրաքանչյուր անգամ կամ լիազոր ձեռքին պետք է անդորրագրերի գիրք ունենա, վորպէսզի, փայլավճարը կամ նրա մասը ստանալիս՝ ստացական տա, թե ումից և դրամ ստացել:

Այն անդամներին, վորոնց համար դժվար է միանգամից ամբողջ փայլը— 5 բուրլին— մտցնել, մաս-մաս վճար

րելու հնարավորութիւնն պետք է տալ: Նախ՝ 2 բուրլի, հետո ամսական 1 բուրլի այն հաշվով, վոր յերեք ամսից հետո, ամբողջ փայլը մտցված լինի:

Կարելի չէ ընդունել մաս-մաս վճարելու մի ուրիշ ձև, բայց անպայման պետք է ժամանակմիջոց նշանակել, վորի ընթացքում փայլը պետք է մտցրված լինի լրիվ կերպով:

Յերբեմն հարմար է լինում փայլավճարը հավաքել վոչ թե փողով, այլ մթերքով: Առանձնապէս դա կարելի չէ գործադրել գյուղական սպառողական ընկերութիւններում, վորտեղ գյուղացին գուցե ցանկանում ել և մտցնել բայց դրամ չի ունենում— իսկ մթերքներ ունենում է և հեշտութեամբ դրամի փոխարեն կարող է մտցնել մթերք, հացահատիկ, խոտ և այլն: Կոոպերատիվի համար բոլորովին միևնույն է՝ թե ինչով կհավաքի փայլավճար, փողով թեմթերքով,— վորովհետև նա հեշտութեամբ մթերքը փողի կարող է վերածել:

Գյուղական կոոպերացիայի կյանքում շատ հաճախ է գործադրվում փայլավճարը մթերքով հավաքելու յեղանակը: Պարզ է, վոր յերեք չպետք է միայն մի ձևը գործադրել— կամ փողով, կամ մթերքով հավաքել: Թող գյուղացիներն իրենց փայլը մտցնեն այնպէս, ինչպէս հարմար է, ով ուզում է փողով, ով ուզում է մթերքով:

IV. ԱՆԿԱՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԸԱՀԱՅՐԳՈՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Վորքան ազգարնակութիւնը շահագրգռված լինի, վորքան նրան ձեռնտու յերևա կոոպերատիվին մասնակցելը, այնքան հեշտ կլինի փայլավճարներ հավաքելը:

Յեթե կոոպերատիվը կարողանա այնպէս կազմա-

կերպել գործը, վոր ամեն մարդու համար պարզ լինի կոռպերատիվի անդամ լինելու ոգոււար, այն ժամանակ փայլավճարներ հավաքելը շատ հեշտ կլինի. անդամներն իրենք կրեն են անգամավճարները:

Վորքան շատ ժողովուրդը իր աչքով այդ ոգուար տեսնի, այնքան ավելի հեշտ կլինի փայլավճար հավաքելը: Կոռպերատիվի անդամների արտոնությունը ու շահը կը- գրավեն նոր անդամներ և կմեծացնեն փայլերի թիվը:

Նույնիսկ ամենաչնչին ոգուան ու արտոնությունը շատ զգալի չափով ոգնում են նոր փայտերերը գրավե- լուն:

Կոռպերատիվի աված աչքի ընկնող նյութական ոգուան այն է, վոր նա լավ ապրանք է ծախում և ավելի եժան, քան մասնավոր խանութպանը: Հասարակական կապիտալ ստեղծելու ոգուար ամեն մեկը չի հասկանա, թեպետ և նա շատ մեծ նշանակություն ունի: Մեծամասնության համար հասկանալի չէ միայն այն, ինչ վոր անմիջապես մտա է նրան: Ձեռնտու և եժան ապրանքը թե՛ գրավում և թե՛ շահագրգռում է: Բայց այդ շահից ոգավում են բո- լորը, ովքեր կոռպերատիվում են գնումներ կատարում, ան- կախ այն բանից — փայլավճար մտցրած անդամներ են նրանք, թե՛ վոչ: Վորպեսզի փայլավճար չմտցնելը առանձին ոգուա տենենա, անդամների համար նշանակում են հատուկ ար- տոնություններ, վորոնցից վոչ անգամ գնողը չի ոգավում:

Այդպիսի արտոնությունները մի քանիսն են և նրանք սովորաբար արվում են այն անդամներին, վորոնք փայ- վճարը լրիվ մտցրել են:

Փայլերն ել մի փոքր շահ են բերում: Առևտրական տարին վերջանալուց և մաքուր շահը պարզելուց հետո, ընդհանուր ժողովը շահից տոկոս է նշանակում փայլերի վրա, — սովորաբար 5 կամ 6 տոկոս, — վորպեսզի կոռպերա- տիվ մտցրած փողը ոգուա բերի այնպես, ինչպես բանկ կամ խնայողական գանձարկղ մտցրած փողը:

Յերբեմն փայտերերին ապրանք գնելիս գեղճ է ար- վում: Այդ գեղճը ուրբուն 2 կամ 3 կոպեկից ավել չը պետք է լինի: Այդ գեղճը քիչ է աչքի ընկնում, այնպես վոր ավելի լավ է նյութական շահագրգռվածություն ստաջ բերելու ուրիշ ձևեր գործադրել: Ձևերից մեկն է փայտե- րերին դիվիդենտ ապր: Բոլոր այն անդամներին, վորոնք լրիվ կերպով մտցրել են իրենց փայլավճարները, տրվում են հատուկ գնումների գրքույկներ, վորտեղ նշանակվում են այն բոլոր գնումները, վոր անում է անգամը կոռպերա- տիվում: Տարվա վերջը՝ ընդհանուր ժողովը ստացած շա- հերից մի գումար հատկացնում է հոգուա փայտերերի: Յուրաքանչյուր փայտաիրոջ կատարած գնումները գըր- բույկով հաշվում են և ընդհանուր ժողովի նշանակած սո- կոսով նրան դիվիդենտ են տալիս: Որինակ, յեթիսպրենք ընդհանուր ժողովը 3 տոկոս դիվիդենտ է նշանակել: Փա- յատերը տարվա ընթացքում 200 ուրբուա ապրանք է գնել խանութից: Նրան հասնում է 6 ուրբլի, 100 ուրբուն 3 ուրբլի հաշվելով: Դուրս է գալիս, վոր փայտերը ավելի ո- գուա է ստանում, քան նրա աված փայլավճարն է: Նա մտցրել 5 ուրբլի և ստացել է 6 ուրբլի: Յեթե նույն իսկ նա 300 ուրբուա ապրանք լինի գնած, այդ գեպքում ել նա կրա- տանա 3 ուրբլի, այսինքն իր ավածի կիսից ավելին: Կոռպերատիվի անգամը գնումները կոռպերատիվում կա- տարելով շահվում է: Հասկանալի չէ, վոր անդամներին տրվող ոգուաի տոկոսի մեծ ու փոքր լինելը կախված է կոռպերատիվի տարեկան ոգուաից: Յեթե ապրանքները այնքան եժան են ծախվել, վոր կոռպերատիվը քիչ ոգուա է ստացել, կնշանակի անդամներին ել քիչ ոգուա կհասնի:

Դիվիդենտը կարող է կամ արվել փայտերերին, կամ թե՛ չե՛ կարելի չէ թողնել կոռպերատիվում իբրև նոր փայ: Յերկրորդ ձևն ավելի լավ է: Այդպիսով կոռպերատիվի անդամները իրենց համար խնայում են փող, վորոնցից կոռպերատիվը ոգավում իբրև կապիտալից:

Փայտավճար մտցրած անդամներին պետք է տալ նաև ուրիշ արտոնութիւններ—այն բոլոր արտոնութիւնները, վոր հնարավոր են:

Պատահում են դեպքեր, յերբ կոտպերատիվ խանութում քիչ քանակութեամբ անհրաժեշտ և շուկայի գնից անհամեմատ եժան ապրանք կա: Նման դեպք պատահել է շաքարի նկատմամբ: Կոտպերատիվում շաքարը արժեք 35—40 կոպ. ֆունտը, իսկ մասնավոր խանութում՝ 80 կոպեկ: Ի հարկէ, այդպիսի ապրանքները պետք է բաց թողնել միայն անդամներին:

Կարող է պատահել նաև, վոր կոտպերատիվում լինի ապրանք, վորից մասնավոր շուկայում չլինի: Պարզ է, վոր այդ ապրանքը նույնպէս պետք է ծախել միայն փայտերերին:

Կարող է պատահել նաև, վոր կոտպերատիվը գյուղատնտեսական մթերքներ գնելու առաջնութիւն տա փայտերերին:

Յենթապրենք կոտպերատիվը նշանակած միջին գնով յուզ է գնում, վորի համար իր արամագրութեան տակ ունի 1,000 ռուբ.: Կոտպերատիվը չափից ավելի յուզ գնելու հնարավորութիւն չունի, իսկ միևնույն գնով լավ յուզ առաջարկողները շատ են:

Այդպիսի դեպքերում նույնպէս առաջնութիւն պետք է տալ անդամներին և մթերքները ամենից առաջ նրանցից պետք է առնել:

Յեթե սպառողական ընկերութիւնը ունի վարկային բաժին, այդ դեպքում նա պետք է վարկավորի միայն անդամներին:

Այս բոլոր արտոնութիւնները ցույց են աւելիս, թե վորքան ձեռնառու է լինել սպառողական ընկերութեան անդամ: Գյուղացիները պարզ կերպով կտեսնեն զրա ոգուտը, թեպէտ նա յերբեմն շատ չնչին է լինում, և

ուրախութեամբ կմտցնեն պահանջվող փողը ու կանգամազրվեն: Դա փայլ գանձելու ամենակարեւոր միջոցներից մեկն է:

Խոսքով պրոպագանդա մղելը ճիշտ է, անհրաժեշտ է, բայց ավելի լավ սոցիոլոգիան է ունենում զործով արված պրոպագանդան:

Գործունեյա, ազնիվ վարչութիւնը, լավ կազմակերպված գործը, ապրանքների ցածր գները, ազգաբնակչութեան մտա կանգնած հասարակական, արհեստակցական և ուրիշ կազմակերպութիւնների հետ կապ ունենալը, անդամներին առաջնութիւն և արտոնութիւն տալը—անհայտանները, վորոնց կիրառելու դեպքում, փայտավճարներ հավաքելը կհեշտանա:

Վարչութիւնն իր ամբողջ յեռանդը պիտի թափի, փայտավճարները գանձելու համար: Դրված նպատակին համաուրթեամբ ձգտելը ամեն ինչ հաղթահարում է:

Յեւ յեթե գյուղացիները չեն անդամագրվում կոտպերատիվին, չեն մտցնում, կամ ավելայնում իրանց փայերը, զրա մեղքը զլիսավորապէս ընկնում է թույլ, անընդունակ, կոտպերատիվ աշխատանքներին քիչ ժամանակ նվիրող վարչութեան վրա:

ՊԱՏԳԱՄ ԿՈՈՊԵՐԱՏՈՐԻՆ՝ ՓՆՏՈՒՐ ՓԱՅՄԱՎՃԱՐՆԵՐՆ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ՔԵԶ ՈՒ ՔՈ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՅ ԵՍ ՓՆՏՈՒՐՄ: ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԸ ԳՏԵՍ ՈՒ ԿՀԱՎԱՔԵՍ ՆՐԱՆՅ:

ՀԱՆՁՆՎԱԾ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

(Թ.Ս.Բ.Գ.Մ.Ս.Ն.Ս.Կ.Ս.Ն.)

1. Չայանով.— Կոոպերացիայի համառոտ դասնիթաց
2. Մակեեովա.— Սպասկոպերացիայի անցյալն ու ներկան:
3. Շալով.— Հաշվապահություն համառոտ ձևերով:
4. Կոժանով.— Ինչ պետք է իմանա ամեն մի բանվոր:
5. Կուլբեով.— Լենինն ու կոոպերացիան:

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(ԻՃԲՆՈՒՐՈՂՆ)

1. Պ. Քոլյան.— Կոոպերատիվի ցավերից
2. Մարգո.— Կինը յեզ կոոպերացիան:
3. Գ. Ս.բով.— Լենինն ու կոոպերացիան (չափածո):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ»-ԻՆ

ՅԵՐԿՇԱԲԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- Տարեկան 3 ս. 50 կ.
- Կես տարի 1 » 80 կ.
- 3 ամիս 1 »

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԴՈՒՐՄ

- 3 ս. 80 կոպեկ.
- 1 » 90 »
- 1 » 10 »

Հասցեն՝ Յեռեվան, Շահումյան փողոց № 3 — «Հայկոպ»-ի խմբագրություն:



63

19

11
24335

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.